դեցութիւն չկայ։ Ժ.—ԺԲ.դդ դարերում Բիւզանդական եւ Պոնտական ազդեցութիւնով Քաղքեդոնիկ (Օրթոդոքս) կղերը տարածուած էին Ճորոխի ափերում եւ Բագրատունի տոհմից շատերը Ափխազիային, Մինգրելիային եւ Վրաստանին տիրող Բագրատունիների ազգակիցները եւ հէլլէնասէրները յարել էին Օրթոդոքս եկեղեցուն եւ հովանաւորում էին վիրական կղերին-եպիսկոպոսներին, որոնք չկարողանալով արհեստաւոր եւ երկրամշակ ժողովրդին՝ կնդանի եկեղեցին իրենց կրօնին յարեցրնել, տքնել էին տաճարների քարերը, վանքերի խցիկները վրացացրնել՝ արձանագրութիւնները վրացերէն գրելով։ Այս մասին վէճեր շատ են եղել եւ աշխատաւորութիւնը միշտ երես է թեքել Օրթոդոքս կղերից։ Ահա այս շրջանում հայերէնից թարգմանում են վրացերէն շարականներ, աղօթքներ եւ ուրիշ կրօնական գրքեր վրացագէտ հայ վարդապետների ձեռքով, որոնք բոլորն էլ տքնել են Ճորոխի Աւազանի բնակչութիւնը բաժանել ընդհանուր հայութիւնից. բայց չի յաջողուել։